





ՀԱՅԱՐՈՍ ՏԵՐ-ԴՐԵԴՈՐԵՆՆ

6131



Յ Ե Յ Խ Զ Ա Ւ Թ

(Պատկեր քրդական կեանից)

(Ն Մ Ա Ն Ռ Խ Թ Ի Ւ Ն)

2047

Թ Ի Ժ Լ Ի Ս
Կ. Ա. Մարտիրոսեանցի || Տիտ. Կ. Մարտիրոսիանց
Օրբելիանովսկայ պ. ճ. № 1|2.

1899

Geography

(Պատկեր քրդական կեանից)

(‘Ամանութիւն)

Дозв. цензурою. 28-го декабря 1899 г. Тифлисъ.

Պարուն էր: Մալիսւայ զեղեցիկ
օրերից մինը: Արևը մօտենում էր իր վեր-
ջալուսին: Հսկայ լեռներն ու սեպ ժայռ երը
խռովածի պէս շուռ էին տւել երեսներն
արևից ու վիթխարի ստւերները ձգել դէպ
արևելք: Երկնքի յաղթահարւած թագու-
հին իր թոյլ ճառադայթներով վերջին
համբոյրն էր դրոշմում լեռների գտայթ-
ներին ու մեղմիկ շոյում սաղարթախիտ
Ճառերի հսկայ կատարները: Դառ ու Ճա-
ղիկ գլուխները խոնարհած պատրաստւում
էին երեկոյեան քաղցր նիրհին: Զարանձի
զիփիւռը անուշ օրօր էր հնչում նիրհող



479

բնութեան, հով ու զով սիռում չորս դին:
Նրան ձայնակցում էր մայլսւան կարկա-
չլւն խենթ ու խելառ առւակիր, որ ծը-
նունդ առնելով լեռան կատարի հալւող
ձիւներից, գալարուն օձի պէս սողում էր
ու փուռում լերան լանջից դէպ ընդարձակ
սիզաւէտ դաշտը:

Դա մի նաշխուն զորգ էր, որի վրայ
ճաւտում էին բազմերանդ ծաղկունքն ու
սիրային անուշ համբուրներ փոխանակում
սիրակէզ բլբուլի ու մեղմիկ զեփիւռի հետ:
Բնութեան այդ համերգին ձայնակցում էր
լերան ստորոտից քեւրդ հովել զլզլան
շվին, որ իր քաղցը դալալիկներով ցրւած
հօտին հրաւիրում էր զիշերային եաթաղը:
Հեռուն, ընդարձակ դաշտի մի անկիւնում,
լերան լանջին փուած էին քսանի չափ
հովւական վրաններ: Նրանց դռներին դար-
նան նաշխուն ծաղիկների պէս ճտվում
էին գառ ու ուլ, հորթ ու մանուկ, որոնց

մերկութիւնը ծածկող միակ կարճ-կարմիր
շապիկները նոյնքան զզզգւած ու կեղտից
ուեւցած էին, որքան զառների սև ու
կարմիր բուրզը: Վրանների մէջ իր վայրի
շքեղութեամբ ու մեծութեամբ աչքի էլ
ընկնում մէկը, որի չորս կողմը կարծես
շուրջ պար էին բռնել միւսները:

Դա ֆաւադ շէլիսի վրանն էր: Վրա-
նի զուանը փոքրիկ քրդական զորգի վրայ
ծալապատիկ նստած էր ինքը շէլիսը:
Եօթանասուն երկար ու ձիգ տարիները
կարծես նրա վրայից սահել էին ինչպէս
իր բնակավայր սեպ լեռների անուշ զե-
փիւռը: Նրա կլորիկ սիրուն դէմքը զեռ-
պահպանել էր իր երիտասարդական թար-
մութեան հետքերը: Խոշոր, սև աչքերը
վառւում էին խիտ յօնքերի տակ իրանց
անշէջ խարոյկների պէս: Միայն ալեխառն
նոսր մօրուքը մատնում էր ծերուկի տա-
րեքը:

Ճէյխ Զաւաղը Սեպուհ լեռների միա-
հեծան տէրն էր: Նրա ձեռին դողում էին
բոլոր քիւրդ աշրիաթները: Ոչ մի բէկ ու
բէկզադէ չէր համարձակւիլ շխտակ նայել
նրա նրա արծւի աչքերին: Նրա խօսքը
ամենի համար երկնառաք պատգամ էր
ու լոկ ակնարկը՝ հրաման: Բայց այս մեծ
արտօնութիւնների ու ընդհանուր յարգան-
քի հետ նա կրում էր և ամենւծանր
պարտաւորութիւններ, որոնց արդարացի
կատարումն էր միայն իրաւունք տալիս
նրան վայելելու այդ յարգն ու պատիւր: Նա
վարում էր իր հովանաւորութեան
տակ զտնուղ բոլոր աշրիաթների գատերն
ու վէճերը: Նա հայր էր ամենքին, նրա
ձեռքից հաւասար պատիժ էին կրում
ազնաւորում բէկզադէն ու հովեկ կիսամերկ
լամուկը: Վայ նրան, ով կըհամարձակէր
խախտել հայրաւանդ սովորութիւններից
մինը: Նա թէկուզ լինէր հէնց իրա ինք-

նակալ շէյխի միակ որդին, կըզրկէր
կեանքից: Նա իր կեանքը բոլոր գծերով
կենդանի օրինակ էր ամենքին: Հազիւթէ
այդ լեռները ծնած լինէին Զաւաղ շէյխի
պէս թուր ու «կոպալ» խաղացնող մի
կտրիչ մարտիկ: Քանի քանի անզամ նա
մասնակցել էր տաճկական պատերազմնե-
րին, ուր ցոյց էր տւել իր հուժկու բազկի
կորովի ոյժը: Ինքն օսմանեան վեհապետը
ակնածում էր այդ ծերուկ առիւծից, որի
թաւոտ կուրծքը յաճախ դարդարում էր
իր կայսերական հարուստ շքանշաններով:
Բայց Զաւաղ շէյխը ոչ իր իշխանա-
կան փառքովն էր հպարտանում, ոչ փայ-
լուն շքանշաններով: Նրա հրմանքն ու
փառքը իր միակ որդին էր, լեռների
պարձանքը, քիւրդ գեղեցկուհիների կռւա-
ծաղիկը: Հէյդար բէկը, շէյխի միակ յոյտ
ու ժառանգը թէկ քսանուչորս տարին
արդէն լրացրել էր, բայց դեռ ամուրի էր:

Ոչ քիւրդ գեղեցկուհիների նազելի հրապուրանքը և ոչ հօր խիստ հրամաններն ու սպառնալիքները կարողացան խելքի բերել յանդուգն երիտառարդին։ Նա սիրում էր մի հայի աղջիկ։ Սրքէ (Սարգիս) քեհի գեղեցիկ Զանոն վաղուց խելքից հանել էր Հէյղար բէկին։

Զաւադ շէլսի օբան մի լուռ իրարանցումի մէջ էր։ Կայծակի արագութեամբ ականջէ ականջ էր անցնում նոյն խորհրդաւոր փսփսոցը։ Մի շաբաթ էր, որ Հէյղար բէկը իր մի բուռն քաջերով անհետացել էր օբայից ու նրա մասին մինչ ցարդ ոչ մի լուր չըկար։



Գիշեր էր։ Աւ ու մուժ գիշեր։ Խիստ խաւարը երկինք ու գետինք խառնել էր իրար։ Յերեկւան պարզ կապուտակամարը յօնքերը կիտել էր, ամօթխած հարոի պէս։ Հաստ ամպի քողով երե-

սը մթնակալել։ Ծառ ու ծաղիկ խօլ խաւարէց վախեցած կուչ էին եկել, իրար ծոց մտել։ Չորս դին ձէն-ձուկ կտրել խաղաղել էր։ Մայիսւան կայտառ բնութիւնը չարաճճի մանկիկի պէս ցերեկւան խաղ ու պարից յոդնած՝ սև վերմակի տակ հանգիստ նիրհում էր։

Լուռ էին և Զաւադ շէլսի վրանները։ Մորփէսը իր սև թւերը տարածել էր և այստեղ։ Միայն արթուն շների խուլ օռնոցը մերթ ընդ մերթ խոռովում էր խորհրդաւոր լուռութիւնը։ Հօտ ու հովհանքին փռւած անհոգ մրափում էին։ Քնել էին բոլորը։ Միայն մէկի աչքից քունը վաղուց փախել էր։ Նա լուռ ու մտախոհ նստած էր վրանի դռանը փլփըլացող խարոյիկի առաջ, որ իր աղօտ լոյսը ձղել էր կենդանի արձանի գունատ դէմքին։ Յիրաւի եթէ արձան լինէր դա՛ իւրաքանչիւր թանդարանի հարուստ զարդ

կարող էր լինել: Բայց դա հաւաղ շէլին
էր: Լեռների այդ խաղարարը ինքն
չէր կարողանում հանգիստ դտնել այդ
զիշեր: Դեռ նոր էր քնել և ահա երա-
զում տեսնում է որ իբր իր վրանի մէջ-
տեղի սիւնը կոտրեց ու ինքը տակը մնաց:
Նա այլապահ վեր թռաւ քնից ու փառք
տւեց Աստծուն որ երազ էր այդ, բայց
այլ ևս չըկարողացաւ քնել: Մի ինչ որ
նախազգացում ճմլում էր նրա սիրտը:
Մի քանի անգամ փորձեց նորից քնել,
բայց իզուր, կարծես մի թռւնաւոր օձ
ներսից կրծում էր: Նա անգիտակցաբար
շորերն հագել ու վրանի դռանը նստած
կարծես հանգչող խարոյկի վերջին կայ-
ծերի մէջ յուսոյ մի կայծ էր փնտրում:
Նա ինքն էլ չըգիտէր ինչ քան ժամանակ
էր անցել, եթի մի յուրտ սարսուռ անցաւ
ամբողջ մարմնով: Գիշերային պաղ հովն
անցել էր մինչև սակորները: Նա կամա-

ցուկ վեր կացաւ. ալ ձանացած տեղից ու
սոսկալի ուրւականի պէս յամբ քաղերն
ուզեց դէպի դաշտը, վրաններից դուրս,
հեռուն, հեռուն անեղը մթութեան մէջ,
ուր կարծես պիտի թաղէր սրտի դառն
թախիծը: Այդ խաւար միայնութեան
մէջ միայն նա կարողացաւ մի սրտանց
խոր ախ քաշել, որ փոքր թեթեւացրեց
բուռն վրդովմունքը: Խոր քնից զարթնա-
ծի պէս մի անուշ յօրանջով սթափւեց:
Չորս դին լուռ էր, դատարկ ու մութ:
Յանկարծ այդ անթափանց մութի միջից
նրա ականջին հասաւ մի խուլ հեծկլ-
տանք, որ կարծես մեծ ուժով ժայթքում
էր խեղդող ժայռերի միջից: Ճէլինը մի
ըոպէ քարացած մնաց: Նա՝ ամբողջ մարմ-
նով լսողութիւն էր դարձել, բայց չէր
կարողանում որոշել հեծկլտանքի տեղը:
Նա իսկոյն փուեց գետին ու մի քանի
վայրկեան շունչը կտրած սուր, փորձառու

ականջը ամուր սեղմեց խոնաւ հողին: — Ի՞նչ է պատահել քեզ օտարական, Ապա գալորս շան պէս կամացուկ բարձ ով ես, որտեղից ուր ես գնում: Ի՞նչու բացաւ ու արդգ քայլերն ուղղեց դէպ միայլպէս անհոգ ընկած ես, վիրաւոր ես, կողմ: Անձրևը կամաց մաղում էր: Կու-ի՞նչ է:

տակւած ամպերը խուլ գոռում էին ու — 0՝, մի խօսեցնիլ ինձ, բարի մարդ: մերթ ընդ մերթ կրակի շանթեր ար-Սրտիս վէրքը մարմնիս վերքերից շատ ձակում, որ ճեղքելով խիտ, խա-կսկծալի է: Գրանաներն ուզում էին յաւարը՝ լուսաւորում էր չորս դին: Ուրւա-փշտակել իմ միակ յոյս ու ես գլորեցի կանը կանգնեց: Հեծկլտանքն երբեմն կոր-նրանցից միայն մէկին, մէկին: Ա՛խ, չում էր ու երբեմն խուլ հնչում աւելի մօտերանի թէ մի անդամ էլ սուրս ձեռու կարծես հէնց ականջի տակ: Յանկարծընկնէր, ես նրանց բոլորովին հաւի պէս կայծակի վարկենական լուսով նա հէնցկըմորթէի: Բայց այժմ անգէն, վիրաւոր իր ոտների տակ տեսաւ մի մարդ, որ աշառիւծի պէս մոլորւած եմ այս լեռներում քերը չռած՝ նայում էր իր կողմը: ու զոհ պիտի դառնամ այդ լրբերին:

— Ո՞վ ես, թշւառական, որ այս — Վեր կաց, օտարական, ով և լինիս, պահուս Զաւադ շէլիսի լեռներում անօքով վրայ ձեռք չըպիտի բարձրանայ Զաթեան ես մնացել:

— Յիրաւի, որ ես մի թշւառ արածիւրն ես: ամենալժբախու լուսականը լուռ էր թաց գետնի վրայ: Զէլիսը բարօտարականը:

ձրացըեց նրա թէկից և իր հուժկու բազուկը
նեցուկ տալով վիրաւորին առաջնորդեց գէպ
իր վրանը: Նա իր ձեռքով լւաց օտարականի
վէրքերն, սպեղանի կապեց ու քնացըեց
իր վրանի մի անկիւնում: Ինքն էլ առանց
հանւելու՝ թինկը տւեց ու խառնաշփոթ
մտքերով պաշարւած նիքհում էր:

Դուրսը մութ էր, անձրեց քանի
գնում սաստիկանում էր: Ամպերի որոտն ու
փայլակը աշխարհ էր բռնել: Յանկարծ
շների վոհմակն ահռելի գոռուն-գոչունով
մէկը միւսի յետքից սլայան վրաններից քաշում էր,
դուրս: Մեռելի պէս քնած հովիւներն իսկ դադարում:
Աղամայ մութն արդէն
մտքի թռան ու գէնքերը ձեռքերին կազմ
պէս մի խուլ մոնչիւն արձակեց ու ապա
ու պատրաստ էին: Բայց շները լսելով
ծանօթ ձայնը՝ դադարեցին հաշելուց: Եկո-
ոտքի մի թեթև հարւածով զարթեցը զը
զէլդար բէկի ընկերներիցն էր: Կա իս-
կոյն ցած թռաւ ձիուց: Բարեւը բերնին սովորված
մոռցել էր:

— Հէլդար բէկին ընկաւ... եղաւ նրա
առաջին խօսքը:

Մի ակնթարթում ամբողջ օրան ոտ-
քի էր: Քսանական հոգուց հեծեալների
երկու խումբ ոլացաւ դաշտն ու լեռները,
ուր փախել էր բէկին սպանողը: Ճէլիս
կենդանի մեռել էր: Նրա դէմքը ոչ մի ար-
տայայտութիւն չունէր: Կրակի ալ բոցերի
պէս վառւող ջուխտակ սև աչքերը մարել
էին: Միայն քունկերակները յորդ ալիքի
պէս բարձրանում րւ իջնում էին. երկար
նա անշարժ, քարացած կանգնած էր
վրանի դռանը: Աղամայ մութն արդէն
քաշում էր, յորդ անձրեն հետղետէ
դուրս: Մեռելի պէս քնած հովիւներն իսկ դադարում:
Ճէլիս ձագը կորցրած վագրի
պէս մի խուլ մոնչիւն արձակեց ու ապա
մտնելով վրան՝ առանց ձէն-ձուկ հանելու
ոտքի մի թեթև հարւածով զարթեցը զը
զէլդար բէկի ընկերներիցն էր: Կա իս-
կոյն ցած թռաւ ձիուց: Բարեւը բերնին սովորված
ու նոտացնելով նրա վրայ իր հիւ-
րին, լուռ առաջնորդեց մինչեւ մօտակայ
ոլուրը:

— Փախիր, թշուական, այլ ևս
կեանքիդ համար ես երաշխաւոր չեմ. դու
սպանել ես իմ միակ որդուն...

Ծերուկի ձայնը խեղդւեց...

Ու ամենի ձին թռցըց իր հեծեալին
դէպի բլրի բարձունքը, որի տակ սուրբ
կրծքին ընկած էր Զաւադ շէլիը, լեռնե-
րի գիւցազնը:



9 U
Nº 20

2041